

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N

416-Ա

27 03

2009թ.

«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ/ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության «2007-2015 թվականների տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի և դրա իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» 2006 թվականի դեկտեմբերի 28-ի N 52 արձանագրային որոշման Ռ-ազմավարություն 3-ի 1-ին կետը և Ռ-ազմավարություն 4-ի 1-ին կետը, «Կա Էֆ Դաբլյու» զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև 2007 թվականի հունիսի 27-ին ստորագրված «Եզրակացություններ և համաձայնություններ տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի երկրորդ փուլի վերաբերյալ» հուշագրի նախապայմանը, ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի Պորտֆոլիո ղեկավար/Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններ/ Սանդրա Իրբեի դիտողություններն ու առաջարկությունները, ինչպես նաև նպատակ ունենալով արդյունավետ համակարգել հակատուբերկուլոզային միջոցառումները, ապահովել «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության տարածքում գտնվող ռեֆերենս /բակտերիոլոգիական/ լաբորատորիայի ազգային կարգավիճակը և նրա գործունեությունը համապատասխանեցնել Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի դրույթներին՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ`

1. Հետ վերցնել «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված ռեֆերենս /բակտերիոլոգիական/ լաբորատորիայի (այսուհետ` լաբորատորիա) գույքը և անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի ապրիլի 23-ի N 80-Կ հրամանով հաստատված «Հանրապետական հակատուբերկուլոզային

դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության հաստիքացուցակում կատարել փոփոխություն՝ հաստիքացուցակից հանելով լաբորատորիայի հաստիքային կազմը:

3. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված գույքի գույքագրում իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն Հավելվածի:

4. Հանձնաժողովին՝

1) մեկ շաբաթյա ժամկետում իրականացնել սույն հրամանի 1-ին կետով սահմանված գույքի գույքագրում և լաբորատորիայի անձնակազմի անձնական գործերի հանձնում-ընդունում՝ կազմելով հանձնման-ընդունման արձանագրություն:

5. «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Մ.Սաֆարյանին և «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Թադևոսյանին՝

1) 10-օրյա ժամկետում համապատասխան փոփոխություններ կատարել «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության և «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակներում և ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հաստատմանը:

6. Սահմանել, որ «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունը օգտվում է լաբորատորիայի ծառայություններից պետական պատվերի շրջանակներում:

7. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահության էկոնոմիկայի և հաշվապահական հաշվառման վարչության պետ Ա.Կարապետյանին՝

1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության միջև լաբորատոր գործիքային հետազոտությունների մասին կնքված պայմանագրում կատարել փոփոխություն՝ հանելով լաբորատոր հետազոտությունների դրույթները,

2) «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել լաբորատորիայի գործառույթների իրականացման պայմանագիր:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 1831-Ա և 2008 թվականի փետրվարի 5-ի թիվ 148-Ա հրամանները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:



Հ. ԲՈՒՇԿՅԱՆ

ՀՀ առողջապահության նախարարի
2009 թվականի «27 03» թի



ԿԱԶՄ

«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՅ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Վ.Հակոբյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության աշխատակազմի առողջապահության
էկոնոմիկայի և հաշվապահական հաշվառման վարչության
հաշվապահական հաշվառման բաժնի պետ
- Ա.Թադևոսյան - «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»
պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար
- Ա.Սարգսյան - «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»
պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր
հաշվապահ
- Հ.Մարգարյան - «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»
պետական ոչ առևտրային կազմակերպության լաբորատոր
աշխատանքները համակարգող
- Մ.Սաֆարյան - «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր»
փակ բաժնետիրական ընկերության տնօրեն
- Ս.Բալասանյան - «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր»
փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահ
- Ա.Միրզոյան - «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր»
փակ բաժնետիրական ընկերության տարածքում գտնվող
լաբորատորիայի վարիչ